ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ Hayanist11@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29-ը նոյեմբերի, 2013թ., N20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝ ***ավագանին որոշում է՝***

ՈՐՈՇՈՒՄ N 20-Ն

Սահմանել Հայանիստ համայնքի 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել

1) Հիմնական օբյեկտների համար՝

ա. Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ:

բ.Սույն կետի 1-ին ենթակետի <<ա>> պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

բա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

բբ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ.

բգ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35.000 դրամ.

2) Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 2500 դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքի և ալկոհոլային վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

5.Համայնքի տարածքում՝

1)Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար 250 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

2)Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝ 150.000 դրամ:

3)Խանութներում, կրպակներում, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 40.000 դրամ:

6.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24 ՝ – ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 40.000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 300.000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 750.000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար ՝ 300.000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար ՝ 125.000 դրամ.

7.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

2)թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 700 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ.

8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 2.000 դրամ:

9.Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 70.000 դրամ:

10.Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 5.000 դրամ:

11.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5.000 դրամ:

12.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3.000 դրամ:

13.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել՝ 2.000 դրամ:

14.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց աղբահանության վճար սահմանել համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 50 դրամ:

15.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքագրման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել՝ 2.000 դրամ:

16.1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել է 0,5 գործակցի կիրառմամբ:

17.Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր:

18.Ընթացիկ տարվա համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի փոփոխություններ չեն կարող կատարվել:

19.Տեղական տուրքերը և վճարները ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դնել առաջատար մասնագետի վրա:

20.Տեղական տուրքերը և վճարները հաշվարկելու և գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1.ԱՐՖԵՆԻԿ ԹՈԽՅԱՆ
2.ՀԱՄԼԵՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ
3.ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՍՊԻՐՅԱՆ
4.ՍԱՐԳԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ
5.ՖԱՐԻԴԱ ԱՎԱԳԻՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՍԱՐԿԻՍՅԱՆ

29.11.2013թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ Hayanist11@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29-ը նոյեմբերի, 2013թ., N21-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով. **ավագանին որոշում է՝**

ՈՐՈՇՈՒՄ N 21-Ն

Հաստատել Հայանիստ գյուղական համայնքի մսուր-մանկապարտեզի ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող ծնողական վճարների 2014 թվականի դրույքաչափը՝ 5000 դրամ:

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1.ԱՐՖԵՆԻԿ ԹՈԽՅԱՆ
2.ՀԱՄԼԵՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ
3.ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՍՊԻՐՅԱՆ
4.ՍԱՐԳԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ
5.ՖԱՐԻԴԱ ԱՎԱԳԻՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԿԻՍՅԱՆ

29.11.2013թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ Hayanist11@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29-ը նոյեմբերի, 2013թ., N22-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով. ***ավագանին որոշում է՝***

ՈՐՈՇՈՒՄ N 22-Ն

Հաստատել Հայանիստ համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ 198.000 (հարյուր իննսունութ հազար) դրամ:

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1.ԱՐՖԵՆԻԿ ԹՈԽՅԱՆ
2.ՀԱՄԼԵՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ
3.ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՍՊԻՐՅԱՆ
4.ՍԱՐԳԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ
5.ՖԱՐԻԴԱ ԱՎԱԳԻՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԿԻՍՅԱՆ

29.11.2013թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ Hayanist11@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29-ը նոյեմբերի, 2013թ., N23-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջներով՝ ***ավագանին որոշում է***՝

ՈՐՈՇՈՒՄ N 23-Ն

Հաստատել Հայանիստի գյուղապետարանի աշխատակազմի և մսուր-մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

1.Հայանիստի գյուղապետարանի աշխատակազմի թվաքանակը՝ 12, մսուր-մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը՝ 8:
2.Հայանիստի գյուղապետարանի աշխատակազմի և մսուր-մանկապարտեզի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

2.1.Հայանիստի գյուղապետարանի աշխատակազմ.

1)Համայնքի ղեկավար- 1 հաստիքային միավոր- 198.000 դրամ:
2)Համայնքի ղեկավարի տեղակալ- 1 հ.մ – 158.000 դրամ:
3)Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (1.2-1)- 1 հ.մ – 158.000 դրամ:
4)Գյուղապետարանի աշխատակազմի գլխ.մասնագետ (2.3-1)-1հ.մ – 156.000 դրամ:
5)Գյուղապետարանի աշխատակազմի առաջ.մասնագետ (3.1-1)-1հ.մ–108.000 դրամ:
6)Գյուղապետարանի աշխատակազմի առաջ.մասնագետ (3.1-2)-1հ.մ–108.000 դրամ:
7)Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (3.2-1)-1հ.մ–104.500 դրամ:
8)Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (3.3-1)-1 հ.մ–99.000 դրամ:
9)Գրադարանավար – 1 հ.մ- 68.000 դրամ:
10)Հավաքարար – 1 հ.մ –59.600 դրամ:
11)Պահակ /գիշերային/ – 1 հ.մ – 93.000 դրամ:
12)Վարորդ-1 հ.մ – 59.600 դրամ:

2.2. Մսուր-մանկապարտեզի աշխատակիցներ.

1)Մանկապարտեզի տնօրեն – 1 հ.մ – 124.000 դրամ:
2)Մանկապարտեզի դաստիարակ – 1 հ.մ – 119.050 դրամ:
3)Երաժշտության դաստիարակ – 1 հ.մ/0,5 դրույք/ – 59.600 դրամ:
4)Մանկապարտեզի հաշվապահ – 1 հ.մ /0,5 դրույք/– 59.600 դրամ:
5)Մանկապարտեզի դաստիարակի օգնական – 1 հ.մ – 59.600 դրամ:
6)Մանկապարտեզի խոհարար – 1 հ.մ – 59.600 դրամ:
7)Մանկապարտեզի գիշերային պահակ – 1 հ.մ – 77.300 դրամ:
8)Լվացարար – 1 հ.մ – 59.600 դրամ:

Կողմ ՝ 5 Դեմ ՝ 0 Ձեռնպահ ՝ 0

1.ԱՐՖԵՆԻԿ ԹՈԽՅԱՆ
2.ՀԱՄԼԵՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ
3.ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՍՊԻՐՅԱՆ
4.ՍԱՐԳԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ
5.ՖԱՐԻԴԱ ԱՎԱԳԻՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԵՍԱՐԿԻՍՅԱՆ

29.11.2013թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ   Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի   Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ Hayanist11@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29-ը նոյեմբերի, 2013թ., N24-Ն

ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և ելնելով անհրաժեշտությունից՝ ***ավագանին որոշում է՝***

ՈՐՈՇՈՒՄ N 24-Ն

Հաստատել Հայանիստ համայնքի 2013 թվականի վարչական բյուջեի փոփոխությունները.

1. Վարչական բյուջեի եկամտային մաս՝
   1)Սուբվենցիայի գումարից պակասեցնել 265.0 հազ. դրամ.
   2)Տեղական տուրքերից՝ ոգելից խմիչք, պակասեցնել 22.5 հազ. դրամ.
2. Վարչական բյուջեի ծախսային մաս՝
   1) 01.1.1 Օրենսդիր և գործադիր մարմիններ.
      4221 հոդվածից պակասեցնել 22.5 հազ. դրամ.
   2) 9.1.1 Նախադպրոցական կրթություն.
      4637 հոդվածից պակասեցնել 265.0 հազ. դրամ:

Կողմ ՝ 5   Դեմ ՝ 0   Ձեռնպահ ՝ 0

1.ԱՐՖԵՆԻԿ ԹՈՒԽՅԱՆ
2.ՀԱՄԼԵՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ
3.ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՍՊԻՐՅԱՆ
4.ՍԱՐԳԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ
5.ՖԱՐԻԴԱ ԱՎԱԳԻՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [illegible] ԳԻՍՅԱՆ

29.11.2013թ.
գ. Հայանիստ